ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հուլիսի 2008 թվականի N 878-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ առաջարկություններ ներկայացնելիս՝ առաջնորդվել սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Տ. Սարգսյան**

2008 թ. օգոստոսի 15
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
հուլիսի 24-ի N 878-Ն որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4.3.13 Արտակարգ իրավիճակների կանխարգելում | | | | | | | |
| 1. Կառավարությունը բնածին և տեխնածին արհավիրքների և աղետների կանխատեսման և կանխարգելման ուղղություններով կիրականացնի հետևյալ աշխատանքները` | 1.1. Ռիսկերի գնահատման տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում` ապահովելով նորագույն տեխնոլոգիաների օգտագործում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ | Պետական կառավարման հանրապետական մարմիններում, մարզերում (Երևան քաղաքում), 58 քաղաքային համայնքներում ստեղծված և համակարգիչներով ու ցանցով ապահովված դիսպետչերական կետեր, ուսուցանված անձնակազմ | Ժամանակակից համակարգչային ծրագրերով ապահոված համակարգ, նորացված համակարգչային բազա, | Գործող ռիսկերի գնահատման տեղեկատվական համակարգ, որը թույլ է տալիս հաշվառել, գնահատել, կառավարել հանրապետությունում առկա տարերային և տեխնածին ռիսկերը և նպատակային օգտագործել պետբյուջեով հատկացված միջոցները | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 1.2. Կառավարման մարմինների և բնակչության ազդարարման ու կապի ժամանակակից համակարգերի հիմնում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ | 996 համայնքներում տեղադրված ազդարարման ժամանակակից սարքավորումներ | 996 համայնքներում տեղադրված կապի ժամանակակից սարքավորումներ | Ուսուցանված կառավարման մարմիններ, Գործող ազդարարման ու կապի ժամանակակից համակարգ | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 1.3. Տարաբնույթ տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման ժամանակակից գործուն համակարգի ձևավորում, ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, հատկացված շենքային պայմաններ | Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում շուրջօրյա գործող դիսպետչերական կետեր, ուսուցանված անձնակազմ, աղետների կանխման և կանխատեսման գործող մեթոդիկաներ | Տեխնիկայով, սարքավորումներով, ծրագրային փաթեթներով ապահոված կենտրոն, դիսպետչերական կետերի հետ կապի առկայություն | Ժամանակակից պահանջներին համապատասխան գործող ճգնաժամային կառավարման կենտրոնի առկայություն | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 1.4. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում իրազեկման ժամանակակից համակարգի ստեղծում ու զարգացում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, միջգերատեսչական լրատվական կենտրոնի առկայություն | Ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման բազայի առկայություն, ձեռքբերված 3 տեսագրման և 2 լուսանկարող սարքեր, 2 մոնտաժային համակարգ | Հանրային իրազեկման ժամանակակից կենտրոնի և թվով 11 մարզային իրազեկման կենտրոնների առկայություն | Իրազեկման ժամանակակից համակարգի առկայություն, հիմնված տեղեկատվական դպրոց | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 1.5. Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության համակարգի բարեփոխում, սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում, իրազեկման համակարգի արդիականացում, արդիական գիտական հայտնագործությունների ներդրում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ | Արդիականացված դիտակետեր | Ուսուցանված անձնակազմ, երկարաշարժերը գրանցող, հետազոտությունների կատարումն ապահովող ժամանակակից համակարգի առկայություն | Երկրաշարժերից բնակչության պաշտպանության ժամանակակից համակարգի առկայություն | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 1.6. Հիդրոօդերևութաբանական ուսումնասիրությունների մոնիթորինգի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության եռամիասնական համալիրի ձևավորում և պարբերական արդիականացում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | Հիդրոօդերևութաբանական ուսումնասիրությունների մոնիթորինգի գործող ժամանակակից համակարգ, տիեզերական դիտարկման կետի առկայություն | Տեղադրված և գործարկված մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության սարքավորումներ` 12 ռադիոլոկացիոն կայաններ և շուրջ 1000 հակակարկտային գեներատորներ | Գործող հիդրոօդերևութաբանական ուսումնասիրությունների մոնիթորինգի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության եռամիասնական համալիր | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 1.7. Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության տեսչության ձևավորում պետական հրդեհային տեսչության հիմքի վրա | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված օրենքի նախագիծ | Հաստատված օրենք և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | Հաստատված կանոններ և պահանջներ, ստեղծված տեսչություն | Անձնակազմով և տեխնիկայով համալրված տեսչություն, ուսուցանված անձնակազմ | Գործող տեսչություն, հատուկ փորձագիտական տվյալների բանկ, հանրապետությունում բնակչության պաշտպանության պատրաստականության իրական պատկերի առկայություն | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 1.8. Տեխնիկական անվտանգության ծառայության օրենսդրական մեթոդաբանական և տեխնիկատեխնոլոգիական բազայի արդիականացում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | Հաստատված օրենսդրական ակտեր | Արդիական մեթոդաբանական և տեխնիկատեխնոլոգիական բազա | | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| 2. Կառավարությունը նախատեսում է, որ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության, փրկարարական աշխատանքների իրականացումը կատարվելու է հետևյալ ուղղություններով | 2.1. Հատուկ փրկարարական, հատուկ հրշեջ, հրշեջ փրկարարական, ջրափրկարարական և այլ ուժերի վերազինում` նորագույն հատուկ տեխնիկայով, սարքավորումներով, հանդերձանքով ու այլ միջոցներով | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | Ուսուցանված անձնակազմ` շուրջ 1000 մարդ, Նորագույն տեխնիկայով, սարքավորումներով և հանդերձանքով վերազինված 6 հատուկ փրկարարական, հատուկ հրշեջ, 24 հրշեջ փրկարարական, 18 ջրափրկարարական ջոկատներ | Ուսուցանված անձնակազմ` շուրջ 1000 մարդ Նորագույն տեխնիկայով, սարքավորումներով և հանդերձանքով վերազինված 24 հրշեջ փրկարարական, մարզային 5 փրկարարկան ջոկատներ, մարզերում ստեղծված և տեխնիկապես հագեցված ու անձնակազմով համալրված ստեղծված 6 ջրափրկարարական կայաններ | Ուսուցանված անձնակազմ` շուրջ 1000 մարդ, նորագույն տեխնիկայով, սարքավորումներով և հանդերձանքով վերազինված 22 հրշեջ փրկարարական, մարզային 5 փրկարարկան ջոկատներ, մարզերում ստեղծված և տեխնիկապես հագեցված ու անձնակազմով համալրված 6 ջրափրկա-րարական կայաններ: Ամբողջությամբ տեխնիկապես համալրված փրկարարական ջոկատներ: | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 2.2. Արտակարգ | Մշակված և | Հաստատված | Կազմակերպված | Համաձայնեցված և | Գործուն | Հայաստանի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միջազգային համագործակցության զարգացում | շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | համատեղ սեմինարներ, խորհրդաժողովներ, մշակված միջազգային պայմանագրերի նախագծեր | հաստատված միջազգային պայմանագրերի նախագծեր | կապերի առկայություն՝ բնակչության պաշտպանության բնագավառում հարուստ փորձ ունեցող երկրների և միջազգային կազմակերպությունների հետ | Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 2.3. Մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի ստեղծում (եվրոպական 211 համակարգի օրինակով) | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | Գործող մարզային դիսպետչերական կետեր և կապի ցանց | Բոլոր հատուկ, վթարային, արագ արձագանքման և այլ ծառայությունների միջև կապի ու ահազանգման, տեղեկատվության փոխանակման համակարգի առկայություն | Մարդուն հրատապ օգնության գործուն համապետական համակարգի առկայություն | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| 3. Կառավարությունը նախատեսում է, որ արհավիրքների, պատերազմի հետևանքների, բնածին և տեխնածին աղետների արդյունքում ստեղծված իրավիճակում առավել հրատապ է առաջնային վերականգնողական աշխատանքների (կենսաապահովման առաջնային ենթակառուցվածքներ) հրատապ կարգով իրականացումը | 3.1. Աղետների և պատերազմական իրավիճակի արդյունքում վնասված և ոչնչացված ենթակառուցվածքների առաջնային վերականգնողական հանրային աշխատանքների համակարգի ձևավորում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | Հաստատված իրավական ակտեր և ձևավորված տեղեկատվական բազա | Գործարկված համակարգ, կատարված վարժանքներ | Ձևավորված համակարգ | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 3.2. Տուժած բնակավայրերի բնակիչների պաշտոնական ներգրավում վերականգնողական աշխատանքներում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված իրավական ակտերի նախագծեր | Հաստատված իրավական ակտեր | Վերականգնողական աշխատանքներում տուժած բնակավայրերի բնակիչներին պաշտոնական ներգրավման ներդրված մեխանիզմներ | Ձևավորված ֆինանսական ֆոնդեր՝ այդ աշխատանքների դիմաց վարձատրության համար | | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 3.3. Աղետների հետևանքների առաջնային վերացում և ապահովագրության համակարգերի ներդրում | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված իրավական ակտերի նախագծեր | Հաստատված իրավական ակտեր, միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | Անցկացված միջազգային խորհրդաժողովներ, սեմինարներ, բանակցությունների վերլուծությունների առկայություն | Մեխանիզմների ներդրում, կազմակերպությունների ստեղծում, օտարերկրյա կազմակերպությունների ներգրավում | Առկա ապահովագրական համակարգ | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |
| | 3.4. Պետական ռեզերվների ընդլայնում, պահպանման | Մշակված և շահագրգիռ պետական | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ | Վերանորոգված պահեստներ, պահեստարաններ և այլն, | Ստեղծված նոր ֆոնդեր | Ընդլայնված և բարեփոխված պետական ռեզերվների համակարգ | Հայաստանի Հանրապետության արտակարգ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ենթակառուցվածքների բարելավում, համակարգի բարեփոխումներ և արդիականացում | կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | | | | իրավիճակների նախարարություն |
| 4. Կառավարությունը կնախաձեռնի Հայաստանում արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման մեխանիզմների հետազոտման, փրկարարական աշխատանքների իրականացման մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվայնացման տարածաշրջանային կենտրոնի ստեղծումը | | Մշակված և շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագիր | Հաստատված ծրագիր և միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսված ֆինանսական միջոցներ, | Ստեղծված կենտրոն, գործունեությունը կարգավորող իրավական ակտերի առկայություն | Տեխնիկայով և անձնակազմով համալրված կենտրոն, վերապատրաստված անձնակազմ | Հայաստանում արտակարգ իրավիճակների կանխարգելման և դրանց հետևանքների վերացման մեխանիզմների հետազոտման, փրկարարական աշխատանքների իրականացման մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվայնացման տարածաշրջանային կենտրոնի առկայություն | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն |